

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ՍՐ, ABOVE-ՎԵՐ/ՎԵՐԵՎ,
AGAINST-ՂԵՄ/ԸՆԴՂԵՄ ԲԱՂԱԴՐԻՉ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՅԱԿԱՆ
ՀԱՐԱԴՎԱԾԱՅԻՆ ԲԱՅ, ԱՐՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Ամփոփում

Անգլերենը և հայերենը հարուստ են *անորոշ դերբայ+նախդիր/կապ* կամ *մակբայ* կազմություններով: Այս միավորները հայերենում կոչվում են հարադրավոր բայեր, իսկ անգլերենում՝ phrasal verb, որը թարգմանաբար նշանակում է «դարձվածային բայ»: Այս բայական հարադրությունների կազմում որպես ոչ բայական բաղադրիչ գործածվում են հիմնականում տեղի և ուղղության իմաստ ունեցող նախդիրներ/կապեր կամ մակբայներ, ինչպես՝ take up բառացի «վեր վերցնել», իմաստը՝ «գերադասել», blow up բառացի «փչել վեր», իմաստը՝ «պայթել», վեր հանել՝ «գաղտնիքը բացել, պարզել», ղեմ ընկնել՝ «խնդրել, թախանձել, աղաչել»:

Նշված միավորները հաճախ գործածվում են նմանատիպ համատեքստերում՝ արտահայտելով մերձ իմաստներ և նման են կառուցվածքով: Սակայն ընդհանուր իմաստներից զատ՝ զուգադրվող միավորներն ունեն նաև միայն իրենց բնորոշ իմաստ, որը բացակայում է լեզուներից մեկում:

Հայերենում, լեզվի համադրական տիպով պայմանավորված, անգլերենի սր, above, against բաղադրիչ ունեցող բայական հարադրությունների իմաստները հաճախ արտահայտվում են վերջավորությունների միջոցով:

Այս հոդվածում քննել ենք հայերենի և անգլերենի սր, above-վեր/վերև, against-ղեմ/ընդղեմ բաղադրիչ ունեցող բայական հարադրությունները՝ իմաստային ընդհանրությունների և տարբերությունների վերհանման նպատակով:

Բանալի բառեր և արտահայտություններ. զուգադրական քննություն, բայական հարադրություն, դարձվածային բայ, համեմատություն, ընդհանրություն, տարբերություն, ոչ բայական բաղադրիչ, կապ, նախդիր, մակբայ:

Ներածություն

Դարձվածային բայերը առանձնահատուկ տեղ ունեն անգլերենում: Դրանք առանձնացվում են այն բայական հարադրություններից, որոնցում ոչ բայական բաղադրիչը լիմաստ խոսքի մաս է: Եթե, օրինակ, անորոշ դերբայով և գոյականով կազմված *go nuts* (բառացի «գնալ **ընկույզ**», իմաստը՝ «խելագարվել») կազմությունը համարվում է դարձվածք, ապա *weigh in* (բառացի «կշռել **վեր**», իմաստը՝ «կարծիք, տեսակետ հայտնել») բայական հարադրությունը համարվում է դարձվածային բայ:

Հայերենի հարադրավոր բայերի համար Ալ. Մարգարյանը առանձնացնում է ութ խումբ: Ութերորդ խմբի մեջ ընդգրկում է այն հարադրավոր բայերը, որոնց ոչ բայական բաղադրիչը տեղի կամ տարածական իմաստ արտահայտող բառ է: Մարգարյանը նշում է, որ այս միավորները բաղադրիչների ներքին կապի և շարահյուսության, ինչպես նաև ձևաբանական կառուցվածքի տեսանկյունից տարբերվում են մյուս տեսակի հարադրավոր բայերից¹:

Այս միավորներին ուշադրություն է դարձրել նաև Ա. Մուրվալյանը: Խոսելով բայական արտահայտությունների մասին՝ նա գտնում է, որ դրանք լինում են երեք տեսակի: Նա այդ տեսակներից մեկն է համարում ետադրության (որոշ մակբայներ և նման բառեր) և անորոշ դերբայի հարադրությամբ կազմված միավորները: Մուրվալյանը նշում է, որ այս միավորներում ոչ բայական բաղադրիչը հիմնականում կատարում է սպասարկու դեր՝ ուղղության իմաստ հաղորդելով բայի արտահայտած գործողությանը: Օր.՝ *առաջ մղել, հետ գնալ, հետ պահել, մոտ վազել*²:

Եթե անգլերենում դարձվածային բայերը հստակ սահմանագատված են այն բայական հարադրություններից, որոնցում ոչ բայական բաղադրիչը լիմաստ խոսքի մաս է, ապա հայերենում վերջիններս նույնպես համարվում են հարադրավոր բայեր: Ստացվում է, որ հայերենում այս կազմությունները ընկալվում են որպես հարադրավոր բայերի մի տեսակ, իսկ անգլերենում հենց այս միավորներն են համարվում հարադրավոր բայեր:

Մեթոդաբանությունը

Ժամանակակից անգլերենի և հայերենի սբ, above-*վեր/վերև*, against-*դեմ/ընդդեմ* բաղադրիչ ունեցող բայական հարադրությունների

¹ Մարգարյան Ալ., Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 134-135:

² Մուրվալյան Ա.Ա., Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Ե., 1959, էջ 78-84:

համեմատական ուսումնասիրությունն իրականացրել ենք համեմատական, վերլուծական և նկարագրական մեթոդների կիրառմամբ:

Ուսումնասիրության նյութը վերցրել ենք հետևյալ բառարաններից՝ Է. Ադայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»³, Պ. Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»⁴, Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան»⁵, Ա. Վ. Կունինի «Անգլերեն-ռուսերեն դարձվածաբանական բառարան»⁶, «Օքսֆորդի իդիոմների բառարան»⁷, «Ամերիկյան իդիոմների բառարան»⁸, «Օքսֆորդի դարձվածային բայերի բառարան»⁹:

Անգլերենում՝ up, above, հայերենում՝ վեր/վերև բաղադրիչ ունեցող կազմություններ:

Որպես ոչ բայական բաղադրիչ՝ up «վեր» բառը անգլերենում ամենագործածականներից է: Հայերենի *վեր* բառով նույնպես կազմվում են բազմաթիվ հարադրավոր բայեր:

Այս բառերը, հաճախ հարադրվելով շարժում ցույց տվող բայերի հետ, վերջիններիս գործողությանը հաղորդում են *դեպի վեր ուղղված լինելու* իմաստ, ինչպես՝ go up-*վեր էլնել*, climb up-*վեր/վերև մագլցել*, look up-*վեր նայել*, throw up- *վեր/վերև գցել*, rise up-*վեր խոյանալ*: Օր.

The boy was **throwing up** the ball.

Տղան վեր էր նետում գնդակը:

Summoning all the strength he had left, he **climbed up**.

Հավաքելով վերջին ուժերը՝ նա վեր մագլցեց:

Above «վերևում» բառը մի շարք կազմություններում բայով արտահայտված գործողությանը նույնպես հաղորդում է *դեպի վեր ուղղված*

³ Ադայան Է. Բ., «Արդի հայերենի բացատրական բառարան», «Հայաստան» հրատարակչություն, Ե., 1976:

⁴ Բեդիրյան Պ. Ս. «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան», Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Ե., 2011:

⁵ Սուքիասյան Ա. Մ. և Գալստյան Ս. Ա. «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան», Երևանի համալսարանի հրատարակչություն, Ե., 1975:

⁶ Кунин А. В. , Англо-русский фразеологический словарь, изд. М., “Русский язык”, 1984.

⁷ Oxford Dictionary of Idioms, Second Edition, Oxford University Press, New York, 2004.

⁸ Spears, R.A., Dictionary of American Idioms and Phrasal Verbs, The McGraw-Hill Companies, USA, 2005.

⁹ Oxford Phrasal Verb Dictionary, Oxford University Press, 2002.

լինելու իմաստ: Որոշ միավորներ ունեն իրենց հայերեն համարժեքները: Օր.՝ tower above հարադրությանը համարժեք է հայերենի *վեր խոյանալ* հարադրավոր բայը: Ինչպես՝

The castle **towered above** the city center.

Ամրոցը վեր էր խոյանում քաղաքի կենտրոնում:

Համեմատվող լեզուներում սր/վեր բաղադրիչով կազմությունները կարող են արտահայտել *գերադասել, նախընտրել, նախապատվություն տալ* իմաստները, ինչպես՝ like up «նախընտրել, հակված լինել մի բան անելու», take up «գերադասել», favor up «նախընտրել, գերադասել», *վեր բռնել* «գերադասել, նախընտրել», *վեր դասել* «բարձր համարել, գերադասել»: Օր.՝

She **favors up** spending time with her family over going to walk with friends.

«Նա **նախընտրում է** ժամանակ անցկացնել ընտանիքի հետ, քան գնալ ընկերների հետ զբոսնելու»:

I **take** red wine **up** to white wine.

«Ես կարմիր գինին **գերադասում եմ** սպիտակ գինուց»:

Ուրեմն դու նրան ինձնից վե՞ր ես դասում:

Այս իմաստն է արտահայտում նաև անգլերենի put «դնել» և above «վեր» բառերով կազմված put above հարադրությունը՝ և համապատասխանում է հայերենի *վեր դասել* հարադրավոր բային: Օր.՝

It's important to **put** the interests of the team **above** your own interests.

Կարևոր է թիմի շահերը վեր դասել սեփական շահերից:

Վեր/սր բառով կազմված որոշ բայական հարադրություններ արտահայտում են *վեր կենալու/արթնանալու* իմաստ, ինչպես՝ wake up «արթնանալ», get up «վեր կենալ», *վեր թռչել* «1. ելնել, 2. քնից արթնանալ», *վեր կենալ* «1. ոտքի ելնել, 2. արթնանալ», *վեր ցատկել* «1. տեղից վեր թռչել, 2. հանկարծ արթնանալ», *վեր հանել* «արթնացնել»: Օր.՝

She **got up** at 5 o'clock.

Նա վեր կացավ ժամը հինգին:

Անգլերենում սր բառով մի շարք բայական հարադրություններ ունեն *արթուն մնալ, չքնել* իմաստները, ինչպես՝ be up «արթուն լինել», stay up «արթուն մնալ», wait up «չքնել՝ մեկին սպասելով»: Օր.՝

I will **be up** all night preparing for exams.

«Ամբողջ գիշեր **արթուն եմ լինելու**, որ պատրաստվեմ քննություններին»:

Համեմատվող լեզուներում *վեր/սր* բառով կազմությունները կարող են արտահայտել *առողջական կամ ֆիզիկական վիճակը վերականգնելու կամ կազդուրվելու* իմաստ, ինչպես՝ shape up «բարելավել մարզավիճակը», sober

up «ուշքի գալ, ակոհողի ազդեցությունը անցնել», perk up «առույգանալ», *վեր կանգնել* «առողջանալ, կազդուրվել»:

Անգլերենում up-ը հաճախ գործածվում է բայով արտահայտված գործողությանը որակի բարելավման կամ քանակի ավելացման իմաստ հաղորդելու համար: Օրինակ՝ dress բայը նշանակում է հագնվել, իսկ dress up հարադրությունը ունի «զուգվել» իմաստը: Heat բայը նշանակում է «տաքանալ», իսկ heat up բայական հարադրությունը ունի «լավ տաքանալ» իմաստը:

Անգլերենի մի շարք բայերում up բաղադրիչը բայի արտահայտած գործողությանը հաղորդում է ավարտվածության իմաստ: Այս հարադրությունները արտահայտում են *գործողությունը վերջացնելու, ավարտին հասցնելու* իմաստ: Բայական բաղադրիչի բառային իմաստը հիմնականում պահպանվում է, իսկ up-ը ավարտվածության իմաստ է հաղորդում բայով արտահայտված գործողությանը, ինչպես՝ sell «վաճառել»-sell up «ունեցած ամեն բան վաճառել», use «օգտագործել»-use up «օգտագործել-վերջացնել», eat «ուտել»-eat up «ուտել-վերջացնել», end «վերջացնել»-end up «լիովին վերջացնել», clean «մաքրել»-clean up «մաքրել-վերջացնել»: Օր.

I need to go to the store because I have **used up** the flour.

«Պետք է գնամ խանութ, քանի որ **օգտագործել եմ ամբողջ** ալյուրը»:

Անգլերենում up բառերով կազմված հարադրությունները կարող են ունենալ *հայտնվել, ի հայտ գալ* իմաստները ինչպես՝ come up «հանկարծակի հայտնվել», crop up «անսպասելի հայտնվել», pop up «հայտնվել», spring up «հանկարծակի հայտնվել»: Օր.

A new shopping mall has **sprung up** in the city centre.

«Քաղաքի կենտրոնում առևտրի մի նոր կենտրոն է **հայտնվել**»:

Համեմատվող լեզուներում *վեր/*up բառով կազմված մի քանի հարադրություններ արտահայտում են *բացահայտ(վ)ել, պարզ(վ)ել* իմաստները, ինչպես՝ turn up «պարզվել, ի հայտ գալ», *վեր հանել* «բացահայտել»:

Սր բառը գործածվում է նաև մի քանի հարադրություններում, որոնք ունեն *վնասվել, փչանալ* իմաստները, ինչպես՝ bash up «վնասել, հարվածի գալ», break up «փչանալ (սարքի, մեքենայի մասին)»: Օր.

My car **broke up**.

«Իմ մեքենան **փչացավ**»:

Above բառով մի քանի հարադրություններ ունեն «իրեն բարձր պահել, բարձր լինել» իմաստը, ինչպես՝ rise above, stand above: Հայերենում այս իմաստն է արտահայտում *վեր կանգնել* հարադրավոր բայը: Օր.

It's necessary to **rise above** the trivial and focus on what's important.

Պետք է վեր կանգնել չնչին բաներից և կենտրոնանալ կարևորի վրա:

Հայերենում կան նաև *վեր-վեր* բաղիյուսական բաղադրիչով կազմություններ, որոնք արտահայտում են բազմապատկական կերպ, ինչպես՝ *վեր-վեր թռչել* «1. այս ու այն կողմ ընկնել, 2. նեղանալով հրաժարվել, 3. ուրախանալ», *վեր-վեր խաղալ* «ցատկոտել»:

Հայերենում քիչ են *վերև* բառով կազմությունները: Դրանք հիմնականում պահպանում են իրենց բառային իմաստները, ինչպես՝ *վերև նայել, վերև գնալ*: Որոշ դեպքերում էլ այս միավորները ունեն դարձվածային իմաստ, ինչպես՝ *վերևից նայել* «արհամարհել»:

Անգլերենում՝ against, հայերենում՝ դեմ/ընդդեմ բաղադրիչ ունեցող կազմություններ:

Against բառն ունի «հակառակ, դեմ, ընդդեմ» իմաստները: Հայերենում against-ին համապատասխանում են *դեմ (դեմը, դեմն), ընդդեմ* բառերը: *Դեմ* կապն ունի «1. դիմաց, առջև, 2. հակառակ» իմաստները: *Ընդդեմ* մակբայն ունի «դեմ, հակառակ, չնայած» իմաստները:

Համեմատվող լեզուներում այս բառերով կազմությունները արտահայտում են բազմազան իմաստներ: Մի շարք կազմություններում *դեմ/against* բառը նշում է հենարան, ինչպես՝ *lean against* «թիկնել, հենվել մի բանի», *դեմ անել* «ուղղել մի բանի կողմը», *դեմ տալ* «մի բանի հենարան դնել»: Օր.

He likes to **lean against** the oak tree and look around.

Նա սիրում է մեջքը դեմ անել կաղնուն և նայել շուրջը շուրջը:

Այս բառերով կազմված հարադրությունները համեմատվող լեզուներում կարող են արտահայտել *մեկին կամ մի բանի դեմ լինելու* կամ *հակադրվելու* իմաստ: Անգլերենում և հայերենում իմաստով համընկնում են հետևյալ կազմությունները՝ *go against-դեմ գնալ, stand against-դեմ կանգնել, be against-դեմ լինել, come against-դեմ ելնել*: Օր.

I **am against** animal cruelty.

Ես դեմ եմ կենդանիների հանդեպ դաժան վերաբերմունքին:

Անգլերենում այս իմաստն են արտահայտում նաև հետևյալ բայական հարադրությունները՝ *have smth against smb* «մեկի դեմ մի բան ունենալ», *proceed against smb* «գործել մեկի դեմ», *pronounce against smb* «մեկի դեմ որոշում կայացնել», *set against smb* «մեկի դեմ փաստարկ բերել», *turn against smb* «մեկի դեմ հանդես գալ»:

Հայերենում *ընդդեմ* բառով հարադրությունները նույնպես արտահայտում են *հակառակ* կամ *դեմ լինել մի բան անելու* իմաստ, ինչպես՝ *ընդդեմ գնալ* «դեմ գնալ», *ընդդեմ դառնալ* «հակառակվել», *ընդդեմ լինել* «դեմ լինել», *ընդդեմ հանել* «1. մեկի դեմ գրգռել, թշնամացնել, 2. հակառակ փաստարկ բերել»:

Անգլերենում *against*-ը գործածվում է նաև *մի բանի դիպչելու/քսվելու* կամ դրան նման իմաստ: Այս դեպքում բայական բաղադրիչը հիմնականում պահպանում է իր բառային իմաստը, իսկ *against*-ը տրական հոլովի իմաստ է հաղորդում բայական լրացմանը, ինչպես՝ *brush against smth* «թեթև հպվել մի բանի», *rub against smth* «մի բանի քսվել», *slam against smth* «խփվել մի բանի», *flatten against smth* «սեղմվել մի բանի»: Հայերենում այս իմաստը արտահայտվում է հիմնականում կրավորական սեռով դրված բայով և տրական հոլովով դրված բայական լրացմամբ: Օր.

Bill's cat likes to **rub against** his legs.

«Բիլի կատուն սիրում է **քսվել** նրա ոտքերին»:

The waves began to **slam against** the sides of the boat.

«Ալիքները սկսեցին **խփվել** նավի կողքերին»:

Անգլերենում *against*-ով կազմությունները կարող են արտահայտել նաև *իրեն կամ ինչ-որ մեկին վնասից/վտանգից պաշտպանելու* իմաստ, ինչպես՝ *guard against smth* «զգուշանալ, գերծ մնալ մի բանից», *insure against smth* «ինչ-որ բանից ապահովագրել», *provide against smth* «միջոցներ ձեռք առնել մի բանի դեմ», *safeguard against smth* «մի բանից պաշտպանել»: Այս իմաստը հայերենում սովորաբար արտահայտվում է բացառական հոլովով դրված բայական լրացմամբ, ինչպես՝

Wearing a helmet can **safeguard against** head injuries while cycling.

«Սաղավարտ կրելը հեծանիվ վարելիս կարող է **պաշտպանել** գլուխը **վնասվածքներից**»:

Վերոնշյալ իմաստը հայերենում որոշ դեպքերում կարող է արտահայտվել *դեմ* բառով այլ կապակցությունների միջոցով, ինչպես՝

The insurance policy will **provide** financial coverage **against** unexpected accidents.

«Ապահովագրությունը **կտրամադրի** ֆինանսական ծածկույթ անսպասելի դժբախտ պատահարների **դեմ**»:

Անգլերենում *against*-ով հարադրությունները արտահայտում են *երկու կամ ավելի երևույթներ հակադրելու կամ համեմատելու* իմաստ, ինչպես՝ *measure against* «համեմատել», *pit against* «հակադրել», *balance against* «համեմատել, կշռադատել», *weight against* «ծանրութեթև անել»: Օր.

It is crucial to **weight against** the potential risks while making a decision.

«Որոշում կայացնելիս կարևոր է **ծանրութեթև անել** հնարավոր ռիսկերը»:

Հայերենում կան *դեմ* բառով կազմություններ, որոնք ունեն *հատուցել կամ հատուցում ստանալ* իմաստը, ինչպես՝ *դեմ ելնել* «հատուցել, հատուցում ստանալ», *դեմը գալ* «փոխհատուցում ստանալ արածի համար»:

Հայերենում *դեմ* բառով որոշ հարադրություններ արտահայտում են *ընդառաջ գալ/գնալ, հանդիպել* իմաստները, ինչպես՝ *դեմ առնել* «հանդիպել», *դեմը գալ* «1. ընդառաջ գալ, դիմավորել, 2. հանդիպել, պատահել», *դեմ գնալ* «1. ընդառաջ գնալ, 2. չհամաձայնել, հակառակվել», *դեմ ելնել* «առջևը ելնել, պատահել»: Օր.

Ճանապարհին նրա դեմ ելավ տնօրենը:

Երբ *դեմ* բառը գործածվում է «առաջ, առջև» իմաստով, այն կարող է փոխարինվել *առաջ* բառով, ինչպես՝ *դեմը գալ/առաջը գալ, դեմը ելնել/առաջը ելնել, դեմը կանգնել/առաջը կանգնել, դեմը վազել/առաջը վազել, դեմը փովել/առաջը փովել:*

Եզրակացություն

Այսպիսով, ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ համեմատվող լեզուներում նշված բայական հարադրությունները հաճախ գործածվում են նմանատիպ համատեքստերում՝ արտահայտելով մերձ իմաստներ: Սակայն ընդհանուր իմաստներից զատ՝ զուգադրվող միավորները ունեն նաև միայն իրենց բնորոշ իմաստ, որը բացակայում է լեզուներից մեկում:

Հայերենում, լեզվի համադրական տիպով պայմանավորված սբ, above, against բաղադրիչ ունեցող բայական հարադրությունների իմաստները կարող են արտահայտվել վերջավորությունով:

Օգտագործված գրականություն

1. Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976:
2. Բեդիրյան Պ. Ս., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 2011:
3. Մարգարյան Ալ. Ս., Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966:
4. Մուրվալյան Ա.Ա., Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1959:
5. Սուքիասյան Ա. Մ. և Գալստյան Ս. Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1975:
6. Кунин А. В., Англо-русский фразеологический словарь, изд. “Русский язык”, 1984.
7. Oxford Dictionary of Idioms, Second Edition, Oxford University Press, New York, 2004.
8. Oxford Phrasal Verb Dictionary, Oxford University Press, 2002.

-
9. Spears R.A., Dictionary of American Idioms and Phrasal Verbs, The McGraw-Hill Companies, USA, 2005.

Сона Симонян

Сравнительный анализ конструкций глагол+компоненты up, above-վեր/վերև, against-դեմ/ընդդեմ в современном английском и армянском языках

Заключение

Ключевые слова и выражения: сравнительный анализ, глагол с частицей, фразовый глагол, сравнение, сходство, различие, неглагольный компонент, постпозиция, предлог, наречие.

Английский и армянский языки богаты различными конструкциями, которые используют инфинитив в сочетании с предлогом, постпозицией или наречием. В армянском языке такие конструкции называются аналитическими глаголами с частицами (հարադրաբայեր), а в английском языке они известны как фразовые глаголы (phrasal verbs). Эти конструкции отражают богатство и гибкость выражения мыслей и действий в английском и армянском языках. Неглагольный компонент этих конструкций, в большинстве случаев, представлен предлогами, постпозициями или наречиями, которые указывают на место и направление. Например, take up означает «предпочитать», blow up означает «взрываться», վեր հանել (буквально «поднять») означает «открыть секрет, узнать», а դեմ ընկնել (буквально «упасть перед чем-то/кем-то») означает «просить, умолять». При изучении этих конструкций необходимо обратить внимание на контекст, чтобы точно определить их значения и использование в каждом языке.

В данной статье представлен сравнительный анализ вышеупомянутых конструкций с компонентами up, above, against, վեր/վերև, դեմ, ընդդեմ. Глаголы с частицами up, above, against, վեր/վերև, դեմ, ընդդեմ обладают множеством сходств. Важно отметить, что единицы с указанными компонентами часто используются в похожих контекстах, выражая близкие значения и обладая схожими структурными характеристиками. Однако, помимо общих значений, эти единицы также имеют свои особенные значения, которые являются уникальными для каждого языка.

В армянском языке, благодаря его синтетической природе, значения английских фразовых глаголов с компонентами up, above и against могут быть выражены с помощью окончаний.

Sona Simonyan

Comparative analysis of verb-particle constructions with the component *up*, *above*-վեր/վերև, *against*-դեմ/ընդդեմ in modern English and Armenian

Conclusion

Keywords and expressions: comparative analysis, verb-particle construction, phrasal verb, comparison, similarity, difference, non-verbal component, postposition, preposition, adverb.

English and Armenian exhibit richness in infinitive+preposition/postposition or adverb constructions. These constructions are referred to as *verb-particle constructions* in Armenian and *phrasal verbs* in English. These constructions reflect the richness and flexibility of expressing thoughts and actions in English and Armenian languages. The non-verbal component of these constructions is preposition, postposition or adverb with a sense of place and direction. Examples include *take up* «prefer», *blow up* «explode», վեր հանել (literally «to take up», meaning «to open the secret, to find out smth», and դեմ ընկնել (literally «fall against», meaning «to ask, to beg»). When studying these constructions, it is necessary to pay attention to the context in order to accurately determine their meanings and usage in each language.

This article presents a comparative analysis of verb-particle constructions with the particles *up*, *above*, *against*, վեր/վերև, դեմ, ընդդեմ.

The verb-particle constructions in English and Armenian exhibit numerous similarities. It is noteworthy that units with the mentioned components are often used in similar contexts, conveying similar meanings and exhibiting comparable structural characteristics. However, in addition to their common meanings, these units also possess distinct meanings unique to one language.

In Armenian, due to the synthetic nature of the language, the meanings of English phrasal verbs featuring the components *up*, *above*, and *against* can be also expressed through the use of endings.

Խմբագրություն է ուղարկվել 29.06.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 25.07.2023թ.

Հրապարակման է ներկայացվել 29.09.2023թ.